

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին

Դիմող՝ Լուսինե Փարսադանյանի ներկայացուցիչներ՝

Արայիկ Միքայելի Զայան

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Անի Ժիրայրի Չատինյան

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Պատասխանող՝

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի

Արաբկիր վարչական շրջանի

քննչական բաժնի քննիչ Գ. Ռ. Գենջոյան

Հասցե՝ ք. Երևան Մամիկոնյանց 1

ԴԻՄՈՒՄ

(ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Մ. Գենջոյանի 30.06.2014թ. քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին)

1. Գործի նախապատմությունը.

1.1 2012 թ. սեպտեմբերի 4-ին Արաբկիր բժշկական կենտրոնում մահացել է Լուսինե Փարսադանյանի դուստրը՝ Էլեն Արմանի Փարսադանյանը:

1.2 2013թ. հունվարի 29-ին Լուսինե Փարսադանյանը ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել:

1.3 2013թ. ապրիլի 23-ին Լուսինե Փարսադանյանի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ իրեն որպես տուժողի իրավահաջորդ ներգրավել և մասնակից դարձնել դատաբժշկական փորձաքննությանը, որը սակայն ուղարկվել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն:

1.4 2013թ. օգոստոսի 28-ին դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, որով խնդրել ենք Լ. Փարսադանյանին հանցագործության մասին հաղորդման հիման վրա որոշման կայացնելու և տուժողի իրավահաջորդ ճանաչելու և նշանակված փորձաքննությանը մասնակից դարձնել նշանակված փորձաքննությանը:

1.5 2013 թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ Երևան քաղաքի դատախազությունից ստացվել է գրություն, համաձայն որի դիմումն ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների դատախազություն:

1.6 2013 թվականի հոկտեմբերի 18-ին ՀՀ «փորձաքննությունների ազգային բյուրոյում» կայանալիք հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության մասին Լ. Փարսադանյանն իմացել է այն սկսելուց մոտ 1 ժամ առաջ հեռախոսազանգի միջոցով, որով քննիչը հայտնել է, որ ՀՀ «փորձաքննությունների ազգային բյուրոյում» տեղի է ունենալու փորձաքննություն, որին կարող է մասնակցել նաև Լուսինե Փարսադանյանը:

1.7. 2013թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ «փորձաքննությունների ազգային բյուրոյում» ավարտվել է նշանակված հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությունը և կազմվել է թիվ 13-0637 եզրակացությունը:

1.8. 2013թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Ռ. Ազաջանյանի կողմից կայացվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

1.9.2013թ. նոյեմբերի 5-ին դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր և Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություններ՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Ռ. Ազաջանյանի 23.10.2013թ. նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջով:

1.10. 2013թ. նոյեմբերի 25-ին ՀՀ Երևան քաղաքի դատախազ Ա. Ս. Դավթյանը կայացրել է բողոքը մերժելու մասին որոշում, այն անհիման լինելու պատճառաբանությամբ:

1.11. 2013թ. դեկտեմբերի 19-ին վարույթն իրականացնող մարմնի որոշումը վերացնելու պահանջով դիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

1.12. 2014թ. հունվարի 31-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քննության առնելով Լ. Փարսադանյանի և նրկայացուցիչներ Արթուր Սաքունցի, Անի Չատինյանի և Արայիկ Զալյանի բողոքը՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Ազաջանյանի 2013թ. հոկտեմբերի 23-ին կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ, կայացրել է որոշում դիմումը բավարարելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու և գործը նախաքննության մարմնին վերադարձնելու մասին:

1.13. 2014թ. փետրվարի 5-ին ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Կ. Կ. Թորոսյանի կողմից կայացվել է քրեական գործ հարուցելու մասին որոշում:

1. 14. 2014թ. մարտի 12-ին վարույթն իրականացնող մարմնի կողմի կայացվել է որոշում՝ կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին և

փորձագետներին առաջադրվել է թվով 13 հարցեր, որոնց վերաբերյալ 2014թ. հունիսի 23-ին տրվել է թիվ 10/կ փորձաքննության եզրակացությանը:

1.15. 2014թ. հուլիսի 7-ին մեր կողմից ներկայացվել է լրացուցիչ դատաբժշկական փորձքննություն նշանակելու մասին միջնորդություն, որը սակայն մնացել է առանց քննության:

1.16. 2014թ. սեպտեմբերի 10-ին մեր կողմից դիմում է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին, որով խնդրել ենք տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ինչ ընթացք է ստացել ներկայացված միջնորդությունը՝ որին որպես պատասխան 2014թ. հոկտեմբերի 21-ին առձեռն ստացել ենք 30.06.2014թ. քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում:

1.17. 2014թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Մ. Գենջոյանի կողմից կայացված նյութերով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը բողոքարկվել է վերդասության կարգով:

1.18. 2014թ. նոյեմբերի 29-ին ստացվել է Երևան քաղաքի դատախազ Ա. Ս. Դավթյանի բողոքը մերժելու մասին որոշումը:

2. Գտնում եմ, որ 2014թ. հունիսի 30-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Մ. Գենջոյանի կողմից կայացված նյութերով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանություններով և հիմնավորմամբ.

2.1 ոչ պատշաճ քննություն կատարելու վերաբերյալ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից, սույն գործի շրջանակներում իրականացված քննչական գործողությունները չեն բխել վերը նշված դրույթից, չի իրականացվել արդյունավետ, գործուն քննություն, մասնավորապես քննիչի գործողությունները ուղղված չեն եղել է. Փարսադանյանի մահվան հանգամանքերը պարզելուն: Մի քանի ամիս տևած նախաքննությունն ավարտվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով, որը սակայն պատշաճ կերպով պատճառաբանված և հիմնավորված չէ, նրանում միայն ներկայացված են դատաբժշկական փորձաքննության եզրակացությունների բովանդակությունները և մեկ նախադասությամբ նշվում է, որ հիմնավորված է այն հանգամանքը, որ է.

Փարսադանյանի մոտ առկա հիվանդությունների դեպքում «Արաբկիր» ԲԿ-ում և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում բուժում իրականացնող բժիշկները բուժօգնություն ցուցաբերելիս թերություններ կամ բացթողումներ թույլ չեն տվել, մասնագիտական պարտականությունները կատարել են ճիշտ, պատշաճ կարգով և նրանց արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը: Վարույթն իրականացնող մարմնի կողմից քննությունը տարվել է միակողմանի, ապացույցները և ցուցմունքերը չեն հետազոտվել իրենց ամբողջության մեջ: Գործով վարույթի ընթացքում Լուսինե Փարսադանյանը իր ցուցմունքում նշել որ երեխան որևէ հիվանդությամբ չի տառապել, ծնվել է միանգամայն առողջ, խնդիրներ չի ունեցել ներկայացրել է ծննդատանից տրված փաստաթղթերը:

Անտեսելով այս հանգամանքը և հիմք ընդունելով բժշկական հաստատության աշխատակիցների ցուցմունքերը, բավարարվելով փորձագետի ոչ ամբողջական եզրակացությամբ: Չի ջեռնարկել համապատասխան միջոցառումներ նոր փորձաքննություն նշանակելու ուղղությամբ, տուժողի կողմից ներկայացված միջնորդությունն էլ մնացել է առանց քննության:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից չի իրականացվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կյանքի իրավունքի շուրջ և չի կայացվել պատճառաբանված և հիմնավորված որոշում քրեական գործի շրջանակներում, կատարվել է քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված նորիմերի խախտմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է տուժողի իրավունքերի ու օրինական շահերի խախտման:

Վարույթն իրականացնող մարմինը քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ նշում է, որ Արաբկիր և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոններում բուժում իրականացնող բժիշկները բուժօգնություն ցուցաբերելիս թերություններ կամ բացթողումներ թույլ չեն տվել...:

Սակայն որևէ ձևով չի արձանագրվել այն հանգամանքը, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում, հետագայում նաև «Արաբկիր» բժշկական կենտրոնում Էլեն Փարսադանյանին նշանակված բուժումը ուղղված չի եղել հիվանդությունը բուժելուն, այլ այն ուղակի կանխարգելիչ նշանակություն են ունեցել, կամ ջերմությունը իջեցնող:

2.2. Փորձաքննության եզրակացությունը թերի, ինչպես նաև օրենքի խախտմամբ լինելու վերաբերյալ պնդումներ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից (անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը) և ինչի հիման վրա է կատարվել փորձաքննությունը, ովքեր են մասնակցել քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի

հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ:

Վերը նշված իրավական ակտի բառացի մեկնաբանության արդյունքում գալիս ենք եզրահանգման, որ 2014թ. հունիսի 23-ի թիվ 10/կ փորձագետի եզրակացությունը պետք է պարունակեր տեղեկություն այն մասին, թե քրեական գործի որ նյութերն է փորձագետի կողմից օգտագործվել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, պետք է ուենար առաջադրված հարցերի հիմնավորված պատասխաններ ինչը սույն փորձաքննության եզրակացության մեջ բացակայում է:

2014թ. փետրվարի 5-ին հարուցված քրեական գործի շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ բարձրացված հարցերին կամ չեն պատասխանվել կամ տրվել են մակերեսային պատասխաններ, որոնք, ըստ էության, չեն համապատասխանում նշանակված փորձաքննության և տրված հարցերի էությանը: Բացի այդ, նշանակված փորձաքննությունների շրջանակներում մի շարք հարցեր մնացել են անպատասխան, վարույթն իրականացնող մարմնի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել տվյալ հարցերը պարզելու ուղղությամբ:

Մասնավորապես առանց պարզաբանման են մնացել հետևյալ հարցերը՝

1.«Արաբկիր» բժշկական կենտրոնում գտվելու ժամանակ էլեն Փարսադանյանը հետազոտվել է բժշկական կենտրոնի նյարդաբան Ռուզաննա Քալաշյանի մոտ, ըստ որի երեխայի մոտ ախտորոշվել է էպիլեպսիա հիվանդությունը, որի համար Է. Փարսադանյանը 2 օրից ավելի դեղորայք է ստացել, այսինքն նշանակվել է բուժում, որից հետո պարզվել է, որ երեխայի մոտ էպիլեպսիա հիվանդություն չկա: Այս ախտորոշման, բուժման և հետազայում դրա հերքման մասին փորձագիտական ոչ մի եզրակացության մեջ որևէ նշում չկա: Քննիչի կողմից փորձագետներին չի առաջադրվել այն հարցը, թե

- ինչ ազդեցություն կարող էր ունենալ նման հիվանդությամբ տառապող մարդու համար էպիլեպսիա հիվանդության դեմ արված բուժումը:

2. «Արաբկիր» բժշկական կենտրոնում բուժում ստանալիս էլեն Փարսադանյանը մարմնական վնասվածքներ է ունեցել մասնավորապես քթի և աչքի շրջանում: Քթի վնասվածքը եղել է ավելի խոր, ըստ մոր խոսքերի երեխայի քիթը վնասվել է շնչառության սարքի խողովակից: Վարույթն իրականացնող մարմնի կողմից փորձագետներին հարց չի առաջադրվել այն մասին, թե

- քթի և աչքի շրջանում եղած վնասվածքները ինչից են առաջացել և արդյոք դրանք գտնվում են մահվան հետ պատճառահետևանքային կապի մեջ,
- արդյոք այն կարող է վնասել շնչառական ուղիները, այս հարցի պատասխանը ևս մնացել է առանց բացահայտման:

3. «Արաբկիր» բժշկական կենտրոնում գտնվելու 10-րդ օրը Է. Փարսադանյանի թոքը վնասվել է էինկուբացիոն խոդովակը ներս հրելու ժամանակ, որի մասին մայրը տեղեկացել է բժշկական կենտրոնի բժիշկ Մերի Ղուկասյանից:

- Է. Փարսադանյանի թոքի շրջանում ստացած վնասվածքը, չի առաջացրել արոյոք երեխայի վիճակի վատացման և գտնվում է արոյոք պատճառահետևանքային կապի մեջ մահվան հետ,

- ինչ հետևանք կարող էր ունենալ այդ տարիքի երեխայի համար թոքի վնասվածքը:

4. Թիվ 13-0637 փորձագիտական եզրակացությամբ թերի պատասխանված է մնացել, իսկ 2-րդ անգամ նշանակված փորձաքննությամբ առհասարակ անդրադարձ չի կատարվել այն հարցերը, թե

- պոլիկլինիկական հետազոտությունների միջոցով հնարավոր էր արոյոք բացահայտել /ախտորոշել/ երեխայի մոտ եղած կամ նոր սկսվող հիվանդությունը
- տվյալ հիվանդությունը ունեցել է արոյոք գաղտնի շրջան և երբ կարող էր այն ախտորոշվել:

5. Վերը նշված հարցերի վերաբերյալ ոչ միայն հարցեր չի տրվել փորձագետներին, այլև այս ուղղությամբ վարույթն իրականացնող մարմինը քննություն չի կատարել պարզելու երեխայի մարմնի վրա առկա մարմնական վնասվածքները, մասնավորապես թոքի շրջանում ստացած վնասվածքի առաջացման պայմանները պարզելու համար: Քննություն չի կատարվել նաև այն հանգամանքի շուրջ, որ Գր. Նարեկացի ծննդատնից ստացած տեղեկատվությամբ հայտնել են, որ երեխայի մոտ, ծնվելուց հետո ոչ մի օրգանում պաթոլոգիա չի եղել, սկրինինգ անալիզները մաքուր են եղել, ինչպես նաև նշել է, որ կարող են հարցում անել սկրինինգ կենտրոն և վերցնել երեխայի անալիզի պատասխանները: Այսինքն չի պարզվել, այն հանգամանքը, թե ինչպես կարող էր Է. Փարսադանյանը ծնվել առողջ և հետագայում նրա մոտ ախտորոշվել ի ծնե հիվանդություն:

Վերը նշվածից հետևում է, որ նշանակված և իրականացված փորձաքննությունները եղել են թերի, բազում հարցեր մնացել են չպատասխանված և թերի պատճառաբանված:

Սյուն դեպքում Է. Փարսադանյանի կյանքի իրավունքի խախտման շուրջ չի կատարվել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն: Մասնավորապես քննիչի կողմից չեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու ուղղությամբ: Վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել պարզելու համար երեխայի մահվան հանգամանքները, ինչպես նաև օբյեկտիվ իրականության բացահայտման ուղղությամբ:

Քրեական գործով վարույթի ընթացքում նշանակված դատաբժշկական փորձաքննություններից ոչ մեկը չի բացահայտել այն հանգամանքը, թե ինչն է Է. Փարսադանյանի մահվան պատճառ դարձել:

2.3. Լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը առանց քննության մնալու վերաբերյալ պնդումներ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փորձաքննություն նշանակելիս և կատարելիս կասկածյալը, մեղադրյալը և տուժողն իրավունք ունեն. փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն:

Նույն օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կարող են նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ ուրիշ փորձագետի:

2. Կրկնակի փորձաքննությունը կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Կրկնակի փորձաքննության կատարումը հանձնարարվում է ուրիշ փորձագետի: Կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձագետի առջև կարող է դրվել նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցը: Կրկնակի փորձաքննություն կատարելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու շարժառիթները: Նախկին փորձաքննությունը կատարած փորձագետները կարող են ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն հետազոտմանը և եզրակացություն կազմելիս նրանք չեն մասնակցում:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից, 23.06.2014 թվականի թիվ 10/կ փորձաքննության եզրակացությունը սուժող կողմին ներկայացնելուց հետո՝ 07.07.2014թ. ներկայացվել է լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն, որը սակայն վարույթ իրականացնող մարմնի կողմից անտեսվել է, մնացել է առանց քննության: Տուժողի կողմից ներկայացված միջնորդությունը առանց քննության թողնելու վերաբերյալ կողմը որևէ պատասխան չի ստացել, դրա մասին տեղեկացել ենք քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելուց ամիսներ անց, երբ ստացել ենք համապատասխան որոշումը: Այսինքն, վարույթն իրականացնող մարմնի անօրինական գործողությունների արդյունքում, սուժող կողմը զրկվել է նշանակված փորձաքննության եզրակացության վերաբերյալ իր կարծիքը արտահայտելու, անհամապատասխանությունները պարզելու ուղղությամբ գործողություններ իրականացնելու հնարավորությունից: Ներկայացված

միջնորդությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից պատշաճ կերպով չի քննվել և քրեադատավարական իմաստով որոշում չի կայացրել:

Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը պատշաճ կերպով պատճառաբանված և հիմնավորված չէ, դրանում պարունակվում է միայն սույն գործի փաստական տվյալները և մի քանի նախադասությամբ տվյալներ այն մասին, որ բժշկական միջամտության արդյունքում չի վրա հասել է. Փարսադանյանի մահը:

Վարույթն իրականացնող մարմինը կատարել է միակողմանի քննություն, ապացույցները գնահատել է սուբյեկտիվ ընկալմամբ, հիմք է ընդունել միայն բժշկական կենտրոնի աշխատակիցների կողմից տրված ցուցմունքերը, անտեսելով տուժող Լուսինե Փարսադանյանի ցույցմունքերը, այն մասին որ իր երեխան որևէ հիվանդությամբ չի տառապել, ի ծնե հիվանդություն չի ունեցել, ծնվել է միանգամայն առողջ: Վարույթն իրականացնող մարմնի կողմից վարույթը ավարտելու համար նաև հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ փորձաքննության ոչ այնքան հասկանալի և ոչ հիմնավոր ու ոչ համոզիչ եզրակացությամբ, անտեսելով տուժողի կողմից ներկայացված լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը:

Նշանակված փորձաքննությամբ չի պատասխանվել մի շարք հարցերի, որոնք էական նշանակություն կարող էին ունենալ է. Փարսադանյանի մահվան հանգամանքները պարզելու համար:

Մասնավորապես պարզաբանման համար փորձագետներին չեն առաջադրվել և չեն պարզաբանվել հետևյալ հարցերը.

- ✦ արդյոք է. Փարսադանյանի մոտ ախտորոշված հիվանդությունը պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում մահվան հետ
- ✦ տվյալ հիվանդությունը հնարավոր էր արդյոք բուժել, եթե այն ախտորոշվեր ավելի վաղ
- ✦ ինչ հետազոտություններ իրականացնելուց հետո էր հնարավոր ախտորոշել տվյալ հիվանդությունը
- ✦ ինչ բուժում իրականացնելու դեպքում էր հնարավոր փրկել է. Փարսադանյանի կյանքը
- ✦ արդյոք մահացու հիվանդություն է է. Փարսադանյանի մոտ ախտորոշված հիվանդությունը
- ✦ երբ կարող էր ախտորոշվել հիվանդությունը, որպեսզի հնարավոր լիներ փրկել երեխայի կյանքը
- ✦ պոլիկլինիկական հետազոտությունների միջոցով հնարավոր էր արդյոք բացահայտել /ախտորոշել/ երեխայի մոտ եղած կամ նոր սկսվող հիվանդությունը
- ✦ տվյալ հիվանդությունը ունեցել է արդյոք գաղտնի շրջան և երբ կարող էր այն ախտորոշվել:

2.3 Կյանքի իրավունքի շուրջ արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությունը.

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...):

Է. Փարսադանյանը գտնվել է պետության կողմից վերահսկվող բժշկական հիմնարկում և կյանքի իրավունքի պաշտպանության պարտավորությունը օբյեկտիվորեն կրում էր պետությունը: Կյանքի իրավունքի կարևորագույն բաղադրիչն է պետության կողմից պատշաճ քննություն իրականացնելը: Սույն դեպքում, դեպքը տեղի է ունեցել պետության կողմից վերահսկվող հիմնարկում և դեպքի շուրջ պետության կողմից չի իրականացվել պատշաճ քննություն, պարզելու համար Է. Փարսադանյանի մահվան հանգամանքները:

Եվրոպական դատարանի կողմից բազմիցս մեկնաբանվել է 2-րդ և 13-րդ հոդվածների ընթացակարգային խախտումների միջև հարաբերությունները, այն է՝ ըստ 2-րդ հոդվածի՝ ընթացակարգային պաշտպանությունը վերաբերում է պետության պարտավորությանը՝ անցկացնել կյանքից զրկման փաստի արդյունավետ հետաքննություն:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքի շրջանակներում արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը (կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը) բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված իրավական դիրքորոշումից, համաձայն, որի պետությունը պարտավոր է ներկայացնել անձին մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, իսկ այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

ՄԻԵԴ-ը սահմանել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր):

Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 25-րդ կետ): Այնուհանդերձ, Յանկովիչի գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ inter alia, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 57-

րդ կետ): Դրա հիման վրա արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 58-րդ կետ):

Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ-ի 1985 թ. նոյեմբերի 29-ի Գլխավոր ասամբլեայի 40/34 բանաձևի 4-րդ կետով, որի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք:

Հոչակագրի 6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը, ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝

բ) վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես երբ տվյալ հարցը վերաբերվում է տուժողին:

Սույն դեպքում Էլեն Փարսադանյանը գտնվել է պետության վերահսկողության սահմաններում գտնվող բժշկական հաստատությունում և Է. Փարսադանյանի կյանքի իրավունքի ապահովման պարտականությունը ուղակիորեն կրում էր պետությունը, որը սակայն չի կատարվել, ավելին բժշկական հաստատության աշխատակիցների գործողությունների արդյունքում խախտվել է Է. Փարսադանյանի կյանքի իրավունքը, որի վերաբերյալ չի իրականացվել պատշաճ քննություն, կատարված նախաքննությունը չի բխել արդարադատության շահերից, այն ուղղված չի եղել մահվան հանգամանքերը բացահայտելուն, մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն և համարժեք փոխհատուցում տրամադրելուն: Այսինքն, ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից խախտվել է Էլեն Փարսադանյանի կյանքի իրավունքը՝ իր երկու բաղադրիչներով նեգատիվ և պոզիտիվ:

ՀՀ վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0077/11/12 գործով որոշման 25-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «...քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով»:

Լուսինե Փարսադանյանը իրացնելով օրենքով իրեն տրված իրավունքերը՝ դիմում բողոքները, միջնորդություններ է ներկայացրել մնացել են առանց քննության, զրկված լինելով մասնակցել վարույթին, դե իսկ նման պայմաններում էլ վարույթն իրականացնող մարմինը խախտել է օրենքի ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի պահանջները:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը, գալիս ենք եզրակացության, որ սույն գործով կյանքի իրավունքի խախտման շուրջ կատարվել է ոչ արդյունավետ քննություն, այն եղել է թերություններով, բացթողումներով և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի դրույթները,

խնդրում եմ

վերացնել 2014թ. հունիսի 30-ի ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Մ. Գենջոյանի կողմից կայացված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

Կից ներկայացվում է՝

1. 2014թ. հունիսի 30-ի ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ. Մ. Գենջոյանի կողմից կայացված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման պատճենը,

2. 19.11.2014թ. դատախազի բողոքը մերժելու մասին որոշման պատճենը:

Դիմողներ՝



Ա. Զալյան

Ա. Չատինյան

18.12.2014թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱԿՈՐ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԿԻՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ք. Երևան, Մամիկոնյանց փող. 1
Հեռ. /010/ 28-87-88. ֆաքս /010/ 28-22-02

ՀԲ 716- 020114

«15» 09 2014թ.

Արթուր Սաքունցին
ք. Վանաձոր Տիգրան Մեծ փողոց 53

Ձեր 10.09.2014թ. դիմումի համաձայն ուղարկում եմ բիլ 14200414 քրեական գործով
քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը :

Առդիր որոշումը 5 փրփից:

Արարկիրի քննչական բաժնի ավագ
քննիչ, ոստիկանության կապիտան

Գ.Ա. Գենջոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30.06.2014թ.

ք.Երևան

«Ն ոստիկանության ՔԳՎ Երևանի ՔԿ Արաբկիրի քննչական բաժնի քննիչ, ոստիկանության կապիտան Գ.Մ.Գեներյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 14200414 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

2013թ. հունվարի 29-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում Լուսինե Վալտերի Փարսադանյանը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2012թ. օգոստոսի 24-ին «Արաբկիր» բժշկական կենտրոն տեղափոխված իր դուստրը՝ էլեն Արմանի Փարսադանյանը, բժշկական կենտրոնի բուժանձնակազմի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու և սխալ բուժօգնություն ցուցաբերելու արդյունքում 2012թ. սեպտեմբերի 4-ին մահացել է:

Համաձայն Արաբկիր ՔԿ-ից վերցված հիվանդության պատմագրի էլեն Փարսադանյանի հիվանդանոց ընդունվելու օրը՝ 24.08.2012թ. ժամը 12.00-ին ախտորոշվել է ցնցումային համախտանիշ, էպիստատուս:

Նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ մինչև Արաբկիր ՔԿ դիմելը, էլեն Փարսադանյանը բուժում է ստացել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՔԿ-ի

Ստո 10 օր բուժում ստանալուց հետո՝ 04.09.2012թ. ժամը 10.30-ին արձանագրվել է կենսաբանական մահ և որպես մահվան պատճառ է նշվել «Սեպսիս, երկկողմանի թոքաբորբ, աջ թոքի թարախակալումով»

Դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ են տվել Արաբկիր ՔԿ-ի և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՔԿ-ի բուժանձնակազմը, որոնք հայտնել են, որ իրենց կողմից խախտումներ, թերություններ կամ բացթողումներ թույլ չեն տրվել, բուժումը իրականացվել է պատշաճ կարգով և երեխայի մահը հնարավոր չի եղել կանխել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակված հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացության

Ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների՝ 07.06.2012թ. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՔԿ առաջին հոսպիտալիզացիայի ընթացքում էլեն Փարսադանյանի մոտ ախտորոշվել է «պերինատալ էնցեֆալոպաթիա, փսիխո-մոտոր զարգացման զլոբալ հապաղումով, ալիմենտար-կոնստիտուցիոնալ ճարպակալում, ներզանգային հիպերթենզիա, ցնցումային համախտանիշ: 05.08.2012թ. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» ՔԿ-ում երկրորդ անգամ հոսպիտալիզացիայի ընթացքում ախտորոշվել է «սուր շնչական հիվանդություն, սուր բրոնխիտ, պերինատալ էնցեֆալոպաթիա, փսիխո-մոտոր զարգացման զլոբալ հապաղումով, ալիմենտար-կոնստիտուցիոնալ ճարպակալում, ցնցումային համախտանիշ»: Վերը նշված ախտորոշումները ընդհանուր առմամբ եղել են ճիշտ և բխել են կատարված լաբորատոր-գործիքային հետազոտությունների և կլինիկական զննությունների արդյունքներից: Հարկ է միայն նշել, որ ներկայացված բժշկական փաստաթղթերում արձանագրված ախտորոշումներում էնցեֆալոպաթիայի զրգացման պերինատալ ժամկետին համապատասխանելը հավաստիորեն հաստատել հնարավոր չէ, քանի որ այն դրսևորվել է երեխայի կյանքի 9 ամսեկան հասակում, ինչն

ավելի բնորոշ է մետաբոլիկ / փոխանակային / հիվանդություններին, որոնք երեխայի մոտ ի ծնե առկա լինելով հանդերձ կարող են դրսևորվել նման տարիքում՝ նաև կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումներով / էնցեֆալոպաթիայի զարգացումով /, ինչը եղել է Բարսաղանյանի դեպքում: Ըստ ներկայացված «Արաբկիր» ԲՀ-ի հմ. 7286-5186 ստացիոնար հիվանդի բժշկական քարտի տվյալների՝ տվյալ բուժ.հաստատություն ընդունվելիս Է.Փարսաղանյանի մոտ ախտորոշվել է «ցնցումային համախտանիշ, էպիստատուս», որը հիմնավորվել է արժանագրված բնորոշ կլինիկական տվյալներով / դեղորայքային բուժմանը չենթարկվող երկարատև ցնցումների առկայությամբ /, իսկ բուժման ընթացքում ախտորոշվել է «B12 դեֆիցիտային անեմիա, երկկողմանի թոքաբորբ, աջակողմյան պնևմոթորաքս / օդի առկայություն պլևրալ խոռոչում/, էնտերոկոլիտ, սեպսիս, ներանոթային տարածուն մակարդման համախտանիշ և պոլիօրգանային անբավարարություն», որոնք հիմնականում բխել են զարգացած բարդություններին համապատասխան և ըստ ցուցումների կատարված լաբորատոր-գործիքային ու կլինիկական հետազոտությունների արդյունքներից, բացառությամբ ախտորոշված սեպսիսին, որը հավաստիորեն չի հաստատվում կատարված հետազոտությունների, ինչպես նաև դիակի ախտաբանաանատոմիական ուսումնասիրության արդյունքներով, որոնք հիմնավորում են երկկողմանի թոքաբորբի և զարգացած օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայի, աջակողմյան պնևմոթորաքսի առկայությունը: Վերը նշված բոլոր բուժ.հաստատություններում Է.Փարսաղանյանի բուժօգնության ցուցաբերման տարբեր ժամկետներում հետազոտությունները կատարվել են ըստ ցուցումների և բավարար ծավալով, որոնց արդյունքում Է.Փարսաղանյանի մոտ եղած հիմնական պաթոլոգիան՝ էնցեֆալոպաթիան ցնցումային համախտանիշով, ինչպես նաև հետագա զարգացած մյուս բարդությունները ըստ ժամկետների ախտորոշվել են ճիշտ: Հետազոտությունների լիարժեքության առումով հարկ ենք համարում նշել գլխուղեղի մագնիսա-ռեզոնանսային շերտագրության առավել վաղ ժամկետներում / ցնցումների դրսևորման սկզբնական շրջանում / չիրականացումը: Տվյալ հետազոտությունը նշանակվել է 24.08.2012թ. «Արաբկիր» ԲԿ-ում՝ պլանավորելով կատարել 28.08.2012թ. ժամը 17.00-ին, ինչը սակայն հիվանդի արհեստական շնչառության տակ գտնվելու օբյեկտիվ պատճառաբանությամբ չի իրականացվել: Տվյալ հետազոտության իրականացումը հնարավորություն կտար առավել լիարժեք ախտորոշել Է.Փարսաղանյանի գլխուղեղի փոփոխությունները, սակայն դրա չիրականացումը չի հանդիսանում մահվան հետ անմիջական պատճառահետևանքային կապի մեջ գտնվող թերություն կամ բացթողում: Վերը նշված բուժ.հաստատություններում ախտորոշումները որոշելիս Է.Փարսաղանյանի մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող թերություններ, բացթողումներ կամ սխալներ թույլ չեն տրվել: IV, V, VI. «Ս.Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում և «Արաբկիր» ԲՀ-ում Է.Փարսաղանյանի նկատմամբ տարբեր ժամկետներում իրականացված բուժումներն ըստ էության համապատասխանել են դրված ախտորոշումներին, եղել են ցուցված, երեխայի վիճակին համապատասխան: Չնայած նրան, որ բուժումների ընթացքում հակացուցված բուժ.միջոցառումներ չեն իրականացվել, այնուամենայնիվ հարկ է նշել, որ հաշվի առնելով «Արաբկիր» ԲԿ-ում Է.Փարսաղանյանի մոտ շարունակական ցնցումներով պայմանավորված թոքերի արհեստական օդափոխության տակ տևական ժամանակ գտնվելու անհրաժեշտությունը և մյուս տվյալները, նպատակահարմար էր հակաբիոտիկային թերապիան սկսել ավելի վաղ, չնայած նրան, որ երեխայի վիճակի և զարգացած բարդությունների պայմաններում հակաբիոտիկային թերապիայի ավելի վաղ սկսման դեպքում քարենպաստ էլքի մեծացումը, հակաբիոտիկային թերապիայի կատարման համար անհրաժեշտ էր:

բուժ.հաստատություններում ձեռնարկված բուժ.սրջօգտառուսասյուս ուղղված սա սուս երեխայի վիճակի բարելավմանը և անբարենպաստ ելքի կանխմանը, որոնք, ըստ «Ս.Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում լրացված բժշկական փաստաթղթերի տվյալների, այդ ժամկետներում ընդհանուր առմամբ եղել են էֆեկտիվ: Ինչ վերաբերում է «Արաբկիր» ԲԿ-ում ցուցաբերված բուժօգնությանը, ապա այդ ժամկետներում է.Փարսաղանյանի մոտ զարգացած բարդությունների պայմաններում իրականացված վերը նշված անհրաժեշտ բուժումները եղել են ոչ արդյունավետ՝ հնարավորություն չընձեռելով խուսափել անբարենպաստ ելքից: VIII. Ըստ ներկայացված երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի տվյալների՝ է.Փարսաղանյանի հսկողությունն ընդհանուր առմամբ կատարվել է բավարար ծավալով, ըստ չափորոշիչի, բացառությամբ երեխայի զարգացման գնահատման նշումների, որոնք ոչ միշտ են կատարվել ըստ գնահատման չափանիշների, սակայն տվյալ հանգամանքը հետագա՝ երեխայի ավելի մեծ տարիքում կատարված նշումների տվյալների պայմաններում, չի հանդիսանում երեխայի մահվան հետ անմիջական պատճառահետևանքային կապի մեջ գտնվող թերություն կամ բացթողում:

Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Ազաջանյանի 2013թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ Լ.Փարսաղանյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Լուսինե Փարսաղանյանի կողմից հիշյալ որոշման դեմ բերված բողոքը Երևան քաղաքի դատախազի կողմից մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ, որից հետո Լ.Փարսաղանյանի և վերջինիս՝ ներկայացուցիչների կողմից դատարան ներկայացված բողոքի հիման վրա Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունվարի 21-ի որոշմամբ վերացվել է քննիչ Գ.Ազաջանյանի 2013թ. հոկտեմբերի 23-ի որոշումը և 05.02.2014թ. վարչական շրջանների դատախազության դատախազ Կ.Թորոսյանի կողմից որոշում է կայացվել ՀՀ քր.օր-ի 130-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործ հարուցելու մասին, որը 10.02.2014թ. ուղարկվել է Արաբկիրի քննչական բաժնի:

2014թ. մարտի 12-ին նշանակվել է կրկնակի հանձնաժողովայի փորձաքննություն և համաձայն փորձագետի եզրակացության

«Արաբկիր» ԲԿ-ում և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում էլեն Փարսաղանյանին տրված ախտորոշումները եղել են ճիշտ:

է.Փարսաղանյանին տրված բուժումը համապատասխանել է պարզված ախտորոշմանը և այն չի եղել հակացուցված:

է.Փարսաղանյանին փաստացի կատարված բուժումը, նշանակված դեղամիջոցները եղել են ճիշտ, բավարար թոքաթորի հիվանդության բուժման համար: Հիվանդի մոտ եղել է ի ծնե հիվանդություն՝ պերինատալ էնցեալոպաթիա՝ ցնցումային համախտանիշներով, որը արդի բժշկության պայմաններում չի ենթարկվում արմատական բուժման: «Արաբկիր» ԲԿ-ում և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում չնայած կատարված ճիշտ բուժումներին, կանխել մահվան ելքը հնարավոր չի եղել:

է.Փարսաղանյանին փաստացի կատարած բուժումները՝ դեղորայքը որևէ կերպ չէին կարող նպաստել վերջինիս մոտ առկա հիվանդության /հիվանդությունների/ զարգացմանը:

Ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի և դիակի ախտաբանատոմիական ուսումնասիրության արդյունքների է.Փարսաղանյանը կենդանության օրոք տառապել է «B12 դեֆիցիտային անեմիա, էնցաֆալոպաթիա՝ ցնցումային համախտանիշներով, երկկողմանի . դիստրոֆիկ թոքաթոր, էնտերոկոլիտ, ներանոթային տարածուն

մակարդման համախոստանիչ» հիվանդություններով, որոնք գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ նրա մահվան հետ:

Է. Փարսադանյանի մոտ հայտնաբերված հիվանդություններից ենցեֆալոպաթիան հնարավոր է, որ լինի ի ծնե, մյուս հիվանդությունները հանդիսանում են ձեռքբերովի և կարող էին լինել որպես բարդություններ հիմնականի: Իսկ մասնավորապես դեստրուկտիվ թոքաբորբ հիվանդությունը պետք է ունենար առնվազն 4-10 օրվա վաղեմություն:

Վերը նշված հիվանդություններից յուրաքանչյուրը ախտորոշվում է համապատասխան նեղ մասնագետների՝ հիմնականում նյարդաբանի, մանկաբույժի կոնսուլտացիաներով, կլինիկո-լաբորատոր, գործիքային հետազոտությունների տվյալներով /արյան, մեզի, քննություն, ռենտգեն, էխոէնցեֆալոգրաֆիա զլխուղեղի հետազոտություն, որովայնի, կրծքավանդակի, ռադիոլոգիական քննություններ սոնոգրաֆիա, ռենտգեն նկարահանում և այլն/, ըստ ցուցումների նաև համակարգչային շերտագրում /զլխի, կրծքավանդակի, որովայնի/, որի կատարման անհրաժեշտությունը որոշվում է բժշկի կողմից. տվյալ դեպքում դրա կատարումը ըստ էության չէր որևէ էական փոփոխության ենթարկեր նշանակված և կատարված բուժումները, ինչի մասի է վկայում դիակի ախտաբանատոմիական ուսումնասիրության արդյունքները /ուղեղանյութում չի հայտնաբերված որևէ օջախային փոփոխություններ՝ արյունազեղում, նորագոյացություն, թարախակույտ/, ուստիև կատարված բուժումը եղել է ճիշտ:

1-5 տարեկան երեխաների մոտ վերոնշյալ հիվանդությունների առաջային ախտորոշումը կատարվում է հետևյալ ախտանիշների հիման վրա՝ ջերմություն, հազ, թուլություն, ախորժակի բացակայություն, քնկոտություն, ռեֆլեքսների ընկճում, ցնցումներ, հոգեշարժական զարգացման արգելակում և այլն:

Հիանդությունները սովորաբար ախտորոշվում են ընդհանուր բժշկական գիտելիքներով, գրականություններով: Ինչ վերաբերվում է մեթոդական ուղեցույցներին, ապա այդպիսիք հանդիսանում են առաջնային բուժօգնության կազմակերպման համար օժանդակ գրականություն:

Է. Փարսադանյանին բուժօգնություն ցուցաբերելիս թերություններ կամ բացթողումներ թույլ չեն տրվել:

Էլեն Փարսադանյանի մոտ առկա հիվանդությունների դեպքում բուժում իրականացնող բժիշկներն իրենց մասնագիտական պարտականությունները կատարել են ճիշտ, պատշաճ կարգով:

Էլեն Փարսադանյանի բժշկական փաստաթղթերում և հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությամբ մահվան պատճառի վերաբերյալ հետևություններում էական հակասություններ չկան:

Հանձնաժողովի կողմից առաջադրված հարցերից աջի այլ լրացումներ անելու անհրաժեշտություն չկա:

Այսպիսով քրեական գործի քննության ընթացքում հիմնավորվել է, որ էլեն Փարսադանյանի մոտ առկա հիվանդությունների դեպքում «Արաբկիր» ԲԿ-ում և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում բուժում իրականացնող բժիշկները բուժօգնություն ցուցաբերելիս թերություններ կամ բացթողումներ թույլ չեն տրվել, իրենց մասնագիտական պարտականությունները կատարել են ճիշտ, պատշաճ կարգով և նրանց արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը:

ուստի դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 261-263-րդ հոդվածներով.

1. Թիվ 14200414 քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդում չիրականացնել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:
2. Որոշման մասին հայտնել կողմերին, բացատրել որոշման բողոքարկման կարգը:
3. Որոշման մեկ օրինակը քրեական գործի հետ միասին ուղարկել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն՝ կարճման օրինականությունը ստուգելու համար:

Արաբկիրի քննչական բաժնի ավագ
քննիչ, ոստիկանության կապիտան



Գ.Ս. Գենջոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010, ք. Երևան, Հանրապետության 85

№ 50/10879 19

«20» 11 2014 թ.

Լուսինե Փարսադանյանի
ներկայացուցիչներ Արայիկ Միքայելի
Զայանին և Անի Ժիրայրի Զարինյանին
/ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկում եմ թիվ 14200414 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արարկիրի քննչական բաժնի ալագ քննիչ Գ.Գևորգյանի 2014 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման դեմ Ձեր կողմից ներկայացված բողոքը մերժելու մասին որոշման պատճենը:

Միաժամանակ, պարզաբանում եմ, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով, Դուք կարող եք բողոքարկել նաև դատարան՝ սույն ծանուցումը սրանապու պահից մեկամսյա ժամկետում:

Առդիր՝ որոշումը «5» թերթից:

Երևան քաղաքի դատախազի տեղակալ,
արդարադատության առաջին դասի
խորհրդական

Ս.Օ.Անուսկեյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
բողոքը մերժելու մասին

19.11.2014թ.

ք.Երևան

Երևան քաղաքի դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդակաՆ Ա.Ս.Դավթյանս, քննարկելով Լուսինն Վալերիի Փարսադանյանի հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված թիվ 14200414 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ Լուսինն Փարսադանյանի ներկայացուցիչներ Արայիկ Զայյանի և Անի Չարինյանի կողմից ներկայացված բողոքը և ուսումնասիրելով քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2013 թվականի հունվարի 29-ին Լուսինն Փարսադանյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնում հաղորդում է Կրվել այն մասին, որ 2012 թվականի օգոստոսի 24-ին <Արաբկիր> բժշկական կենտրոնն Կրկափոխված իր դուստրը՝ Էլեն Փարսադանյանը, բժշկական կենտրոնի բուժանձնակազմի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պարշաճ կատարելու և սխալ բուժօգնությունն ցուցաբերելու արդյունքում 2012 թվականի սեպտեմբերի 4-ին մահացել է:

Նյութերի նսխապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից քացարություններ են վերցվել Էլեն Փարսադանյանին բուժօգնությունն ցուցաբերած <Արաբկիր> բժշկական կենտրոնի բուժանձնակազմից, <Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>, <Արաբկիր> բժշկական կենտրոններից արացվել են Է.Փարսադանյանի բժշկական փաստաթղթերը և 22.02.2013թ. նշանակվել է դատարբժշկական հանձնաժողովային փորձարնություն՝ Է.Փարսադանյանին բժշկական օգնությունն և պասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պարշաճ կատարելու, դրանց նկարմամբ սնփույթ կամ սնքարևիսիղճ վերաբերմունքի հերևանքով Էլեն Փարսադանյանին սնզգոշությամբ մսհ պարճատելու հանգամանքը պարզելու համար:

Դատարբժշկական հանձնաժողովային փորձարնության 2013 թվականի հոկտեմբերի 18-ի եզրակացության համաճայն՝ <Սուրբ Գրիգոր Լուսավորիչ> և <Արաբկիր> բուժհասարություններում ախորոշումները որոշելիս Էլեն Փարսադանյանի մսհվան հեր սնմիջական պարճատական կասի մեջ գրնվող թերություններ, քացթողումներ կամ սխալներ թույլ չեն Կրվել: <Սուրբ Գրիգոր Լուսավորիչ> և <Արաբկիր> բժշկական կենտրոններում Է.Փարսադանյանի նկարմամբ Կարբեր ժամկերներում իրականացված բուժումներն ըստ էության համապարասխանել են դրված ախորոշումներին, եղել են ցուցված, երևիայի վիճակին համապարասխան: Նշված բուժհասարություններում Է.Փարսադանյանի հսկողությունն ընդհանուր առմամբ կատարվել է քավարար ժավալով, ըստ չսփորոշիչների, իսկ ձեռնարկված միջոցատումներն ուղղված են եղել երեխայի վիճակի քարելավմանը և սնքարենսպասար ելքի կանխմանը:

Է.Փարսադանյանի մայրը բացարժեքապես հայրն է և ուսն, որ Էլեն Փարսադանյանի քթի, աչքի և թոքի շրջաններում եղել են մարմնական վնասվածքներ, որոնք կարող է անմիջական պարճատական կապի մեջ գրելիքն նրա մահան հետ, մինչդեռ՝ Է.Փարսադանյանի դիակի ախտաբանաանատոմիական հետազոտությամբ վերջինիս մարմնի վրա վնասվածքներ չեն հայտնաբերվել:

Էլեն Փարսադանյանի դիակի ախտաբանաանատոմիական հետազոտություն կատարած <Արաբկիր> բժշկական կենտրոնի դիակերձարանի պարանատոմ Աննա Պետրոսյանը բացարժեքապես է փվել այն մասին, որ հիվանդանոցից դիակերձարան տեղափոխվելուց հետո, երեխայի դիակերձան ժամանակ, նրա մարմնի վրա, բացի բժշկական մանիպուլացիայի հետքերից, այլ վնասվածքներ չեն եղել:

<Արաբկիր> բժշկական կենտրոնի բժիշկ ռեանիմատոլոգ Մերի Ղուկասյանը և վերակենդանացման բաժանմունքի վարիչ Աշոտ Գյուրոդադյանը նույնարժեքական բացարժեքապես հայրն են, որ Էլեն Փարսադանյանի մարմնի վրա վնասվածքներ չեն եղել, միայն Է. Փարսադանյանի քթի շրջանում ինտուբացիոն խողովակի ֆիքսման համար օգտագործված լեյկոպլաստիկները հնարավոր է գրգռեն երեխայի մաշկն իրենց ամրացման տեղում: Իսկ դարբժշկական փորձաքննության եզրակացությամբ միանշանակ պարզվել է Է.Փարսադանյանի մահվան պարճառը, որպիսին հիշարակված վնասվածքները չեն եղել:

Վարույթն իրականացնող մարմինը ձեռք բերված փաստական փյախներով հիմնավորված համարելով, որ Էլեն Փարսադանյանին բուժօգնություն ցուցաբերած բուժանձնակազմի կողմից նրա մահվան հետ անմիջական պարճատական կապի մեջ գրելիք թերություններ, բացթողումներ կամ սխալներ թույլ չեն փրվել, բժշկական օգնություն ցուցաբերելու ընթացքում մասնագիտական պարտականությունները կատարվել են պարշաճ կերպով, 2013 թվականի հոկտեմբերի 23-ին որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության պարճատարանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2013 թվականի նոյեմբերի 5-ին Լուսինե Փարսադանյանի ներկայացուցիչներ Արայիկ Զայյանը և Անի Չարինյանը հիշյալ որոշման դեմ բողոք են ներկայացրել Երևան քաղաքի դարախազին խնդրելով վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ նախկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Ազազանյանի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը, հարուցել քրեական գործ, կատարել լրիվ, բազմակողմանի քննություն և պարզել Է.Փարսադանյանի մահվան իրական պարճատները:

Երևան քաղաքի դարախազի 25.11.2013թ. որոշմամբ Ա.Զայյանի և Ա.Չարինյանի բողոքը մերժվել է:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Ազազանյանի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը Ա.Զայյանի և Ա.Չարինյանի կողմից բողոքարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության ստացին սարյանի դարարան: 2014 թվականի հունվարի 21-ին դարարանի կողմից վերոնշյալ որոշումը վերացվել է ու Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դարախազության դարախազ Կ.Թորոսյանի կողմից 05.02.2014թ. որոշում է

կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 14200414 քրեական գործը հարուցելու մասին, որը նախաքննություն կատարելու համար 10.02.2014թ. ուղարկվել է Արարկիրի քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում ձեռնարկված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում ձևաբերված փաստական տվյալների հիման վրա վարույթն իրականացնող մարմինը հիմնավորված համարելով, որ էլեն Փարսադանյանի հիվանդությունների առկայության դեպքում <Արարկիր> ԲԿ-ում և <Սուրբ Գրիգոր Լուսավորիչ> ԲԿ-ում բուժում իրականացնող բժիշկները բուժօգնություն ցուցաբերելիս թերություններ կամ բացթողումներ թույլ չեն տվել, իրենց մասնագիտական պարտականությունները կատարել են ճիշտ, պարզաճ կարգով, 30.06.2014թ. որոշում է կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով քրեական գործի վարույթը կարճելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության պարճառարանությամբ:

2014 թվականի հոկտեմբերի 27-ին հիշյալ որոշման դեմ բողոք են ներկայացրել Լուսինե Փարսադանյանի ներկայացուցիչներ Արայիկ Զայանը և Անի Չարինյանը՝ խնդրելով վերացնել թիվ 14200414 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, կատարել օրյեկրիվ, բազմակողմանի քննություն՝ էլեն Փարսադանյանի մահվան պարճառները պարզելու համար:

Բողոքը և այն օրենքով սահմանված ժամկետում վերադաս դատախազին ներկայացնելու վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը Երևան քաղաքի դատախազությունում արացվել են 2014 թվականի նոյեմբերի 14-ին:

Ոստանստասիրելով քրեական գործի նյութերը և քննարկելով Արայիկ Զայանի և Անի Չարինյանի բողոքը, գրնում են, որ այն ենթակա է մերժման հետևյալ պարճառարանությամբ.

Նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից 2014 թվականի փետրվարի 17-ին որոշում է կայացվել Լուսինե Փարսադանյանին որպես տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին և վերջինս ծանոթացել է տուժողի իրավահաջորդի իրավունքներին և պարտականություններին:

2014 թվականի մարտի 12-ին նշանակվել է կրկնակի հանձնաժողովային փորձաքննություն: Փորձաքննություն նշանակելու մասին վերոնշյալ որոշման մեջ ներառվել են նաև տուժողի իրավահաջորդ Լ.Փարսադանյանի ներկայացուցիչների կողմից փորձագետներին առաջադրված հարցադրումները:

Հիշյալ փորձաքննության եզրակացության համաձայն՝

- 1) <Արարկիր> ԲԿ-ում և <Սուրբ Գրիգոր Լուսավորիչ> ԲԿ-ում էլեն Փարսադանյանին տրված ախտորոշումները եղել են ճիշտ:
- 2) Է.Փարսադանյանին տրված բուժումը համապարասխանել է պարզված ախտորոշմանը և այն չի եղել հակացուցված:
- 3) Է.Փարսադանյանին փաստացի կատարված բուժումը, նշանակված դեղամիջոցները եղել են ճիշտ, բավարար թոքաբորք հիվանդության բուժման համար: Հիվանդի մուր եղել է ի ծնե հիվանդություն՝ պերինալ Էնցեֆալոպաթիա՝ ցնցումային համախարանիշներով, որը արդի բժշկության պայմաններում չի ենթարկվում արմատական բուժման: <Արարկիր> ԲԿ-ում և <Սուրբ Գրիգոր Լուսավորիչ> ԲԿ-ում չնայած կատարված ճիշտ բուժումներին, կանխել մահվան էլքը հնարավոր չի եղել:

- 4) Է.Փարսադանյանին փաստացի կատարած բուժումները՝ դեղորայքը որևէ կերպ չէին կարող նպաստել վերջինիս մուր ստկա հիվանդության /հիվանդությունների/ զարգացմանը:
- 5) Ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի և դիակի ախտաբանաարտմիական ուսումնասիրության արդյունքների Է.Փարսադանյանը կենդանության օրոք տատանվել է <B12 դեֆիցիտային անեմիա, էնցեֆալոպաթիա՝ ցնցումային համախտանիշներով, երկկողմանի դիստրոֆիկ թոքաբորբ, Էնդերոկոլիտ, ներանոթային տարածուն մակարդման համախտանիշ> հիվանդություններով, որոնք գրնվում են պարանոստալերևանային կապի մեջ նրա մահվան հետ:
- 6) Է.Փարսադանյանի մուր հայրնաբերված հիվանդություններից Էնցեֆալոպաթիան հնարավոր է, որ լինի ի ծնե, մյուս հիվանդությունները հանդիսանում են ձեռքբերովի և կարող էին լինել որպես բարդություններ հիմնականի: Իսկ, մասնավորապես, դեպրեսիվ թոքաբորբ հիվանդությունը պետք է ունենար սոնվազն 4-10 օրվա վաղեմություն:
- 7) Վերը նշված հիվանդություններից յուրաքանչյուրը ախտորոշվում է համապատասխան նեղ մասնագետների՝ հիմնականում նյարդաբանի, մանկաբույժի կոնսուլտացիաներով, կլինիկո-լաբորատոր, գործիքային հետազոտությունների փյալներով /արյան, մեզի, քննություն, ռենդգեն, էխոէնցեֆալոգրաֆիա՝ գլխուղեղի հետազոտություն, որովայնի, կրծքավանդակի, ռադիոլոգիական քննություններ՝ սոնոգրաֆիա, ռենդգեն նկարահանում և այլն/, ըստ ցուցումների նաև համակարգչային շերտագրում /գլխի, կրծքավանդակի, որովայնի/, որի կատարման անհրաժեշտությունը որոշվում է բժշկի կողմից. փյալ դեպքում դրա կատարումը, ըստ էության, չէր կարող որևէ էական փոփոխության ենթարկեր նշանակված և կատարված բուժումները, ինչի մասին է վկայում դիակի ախտաբանաարտմիական ուսումնասիրության արդյունքները /ուղեղանյութում չի հայտնաբերվել որևէ օջախային փոփոխություններ՝ արյունազեղում, նորագոյացություն, թարախակույր/, ուստի և կատարված բուժումը եղել է ճիշտ:
- 8) 1-5 տարեկան երեխաների մուր վերոնշարադրյալ հիվանդությունների առաջային ախտորոշումը կատարվում է հետևյալ ախտանիշների հիման վրա՝ ջերմություն, հազ, թուլություն, ախորժակի բացակայություն, քնկոտություն, ռեֆլեքսների ընկճում, ցնցումներ, հոգեշարժական զարգացման արգելակում և այլն:
- 9) Հիանդությունները սովորաբար ախտորոշվում են ընդհանուր բժշկական գիրելիքներով, գրականությամբ: Ինչ վերաբերվում է մեթոդական ուղեցույցներին, ապա այդպիսի հանդիսանում են սուաջնային բուժօգնության կազմակերպման համար օժանդակ գրականություն:
- 10) Է.Փարսադանյանին բուժօգնություն ցուցաբերելիս թերություններ կամ բացթողումներ թույլ չեն տրվել:
- 11) Էլեն Փարսադանյանի մուր ստկա հիվանդությունների դեպքում բուժում իրականացնող բժիշկներն իրենց մասնագիտական պարտականությունները կատարել են ճիշտ, պարզաճ կարգով:
- 12) Էլեն Փարսադանյանի բժշկական փաստաթղթերում և հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությամբ մահվան պարճատի վերաբերյալ հետևություններում էական հակասություններ չկան:

13) Հանձնաժողովի կողմից առաջադրված հարցերից բացի այլ լրացումներ անելու անհրաժեշտություն չկա:

Ինչ վերաբերում է բողոքարկների նշված այն փաստարկներին, որ Էլեն Փարսադանյանի քթի, աչքի և թոքի շրջաններում եղել են մարմնական վնասվածքներ, որոնք կարող է անմիջական պարճատական կապի մեջ գրնվելին նրա մահան հետ, սպա Է.Փարսադանյանի դիակի ախտաբանաանատոմիական հետազոտությամբ վերջինիս մարմնի վրա, բացի բժշկական մանիպուլյացիայի հետքերից, այլ վնասվածքներ չեն հայտնաբերվել:

Բացի այդ, բողոքում նշված է, որ դատաբժշկական փորձաքննությամբ չեն պարզվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, մինչդեռ՝ հանձնաժողովային դատաբժշկական և կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությունների ևզրակացություններով, ըստ էության, պարզաբանվել են սույն դեպքով նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

Այսպիսով, քրեական գործի նախաքննության ընթացքում կատարված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում Էլեն Փարսադանյանին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պարշաճ կատարելու, դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով անզգոշությամբ նրան մահ պարճատելու կամ վերջինիս մահվան հետ անմիջական պարճատական կապի մեջ գրնվող մարմնական վնասվածքներ սրանալու վերաբերյալ փաստական րվյալներ ձեռք չեն բերվել, որպիսի պայմաններում նրանց գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, 263-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 14200414 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին ՀՀ ոստիկանության ԲԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնի ախագ քննիչ Գ.Գենջոյանի 2014 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման դեմ բերված Ա.Զայանի և Ա.Չարինյանի բողոքը մերժել՝ անհիմն լինելու պարճատարանությամբ:
2. Որոշման օրինակն ուղարկել Ա.Զայանին և Ա.Չարինյանին:

Արդարադատության երկրորդ
դասի խորհրդական

Ա.Ս. Դասթյան

